ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՆՈՐ ՏԵՍՈՒԹԻՒՆ ՄԸ

Ի ՆՊԱՍՏ ԱՆԿԱԽ ՀԱՅԱՍՏԱՆԻ

(Շար. տես. 1919 Բզմ. էջ 181).

Ամբ ինչպէս քաղաքի ազգաբնակութեան կէսն 7500 տուն, այսպէս ալ 300 գիւղերէից կէսն, այսինքն են 150 առնուազն հայեր էին 1600էն առաջ, իսկ արդ համարելով միջին հաշուով մէն մի գիւղ 100 տուն, կ'ունենանք 15,000 տուն, որ քաղաքի 7500 տանց վրայ աւելցնելով, կը լինին ամբողջ ի միասին 22,500 տուն. և իւրաքանչիւր տուն 10 հոգի հաշուելով կը լինին 225,000 հայեր։ Այսպիսի բազմաթիւ ազգաբնակութենէն մնացած էին ինֆիֆեանի ժամանակ, այն է 1806ին, քաղաքին մէջ 2,000 տուն. Բոքնիկ՝ 100 տուն, Կովտուն՝ 150 տուն, Ազդ՝ 150, Խոշիատեմ, Թաթրուտ, Խանծար, Խորատնս, Խարազ, իւրաքանչիւրն 40–50 տուն բնակչօք. ընդամէն տունք 2670 × 10 = 26,700 անձինք։ Բնականապէս այժմ կը հարցուի, ապա ուրեմն մնացած 198,300 հայերն ինչ եղան։ Քանի որ անսովոր արտագաղթ մը յիշուած չէ և ոչ ալ նոր կոտորած մը յետ Թիմուր–Լանկի. Հաւանականն է որ ասոնք ալ Զառայցոց բաղդին վիճակուած ըլլան, այսինքն՝ ինամեցած և խառնուած ընդ տաճկաց։

ԵՒԴՈԿԻՈՅ կամ Թոգաթի համար կը գրէ (Բ. եր. 293) թէ. «ի սահմանի նորին են գիւղերէք իբր 190. իսկ բնակիչք քաղաքին են տունք 16,000, յորոց իբր 2500 են յազգէս Հայոց, և 300 ի Ցունաց. մինչդեռ Դուռնրֆորի (Բ. 434) հոն այցելած ժամանակ՝ շատ աւելի էին Հայք։ Այն նահանգի Պիզէռի կամ Պիզառի գիւղին համար կ'ըսէ Ինֆիֆեան. «Պիզառի գիւղ, հեռի ի Թոգաթէ 4 ժամու բնակեալ ի Հայոց... որոց թիւ յառաջ ժամանակաւ հասանէր մինչև յ800 տուն». որով լռելեայն կ'իմացնէ թէ այժմ ոչ նոյնպէս։ Ընդէր. պատճառն յայտնի է։

ՏԻՎԻՐԻԿԻ համար կը գրէ (Բ. եր. 298). «Բնակիչք սորա յառաջագոյն էին տունք 12,000, յորոց իբր 2 հազարքն էին յազգէս Հայոց, բայց այժմ հազիւ գտանին ի նմա առ հասարակ տունք 2,000, յորոց իբր 100 են տունք Հայոց, արք կորովիք. իսկ թէ 1900 տուներն, այսինքն՝ 19,000 հայերը (տունը 10 գլուխէն հաշուելով), ինչ պարագաներու մէջ և ինչպէս անյայտացան, բացարձակապէս լռած է։

ԱՐԱԲԿԵՐ գաւառի մասին կը գրէ (Բ. եր. 303). «Թիւ գիւղերէից սորա հասանէ, ասեն, մինչև 84, բնակեալ ի տաճկաց և բաւ մեծի մասին ի Հայոց. իսկ թիւ բնակչաց քաղաքին իբր 10,000. յորոց իբր 600 (տունք) են յազգէս Հայոց, իսկ մնացեալքն տաճիկք»։

ԷԿԻՆ կամ ԱԿՆ. Անդ. եր. 308. «Բաց ի Հայոց՝ յայս գաւառ են տաճիկք և Հայոհոռոմք. իսկ բնակիչք կրկին վերջին գիւղերէից գեր բաւ մասին դարձան ի տաճկութիւն բազում ամօք յառաջ. ուստի ի տեղիս տեղիս տունք ասցա և ազգատոհմք տակաւին պահեն գհայկական անուանս գաւառին, և կոչեն խալոկկիլ, վարդանկիլ, կնքահայրկիլ, վանգեղ՝ (վասն գոլոյն ի Վանայ)»։

Ոչ միայն այսչափ, այլ և զարդիս տաճիկներէ բնակուած հեռաւեալ գիւղերն, – որոնց անուանքն սակայն նոյնպէս հայյայտի են և հայկական հնութեանց հետքեր ունին, – այսինքն՝ «Բակեր, Ալպրանք, Ազլ, Հաբեղնոց կամ Հաբաղնոց, Սերկեվիլ, Մինչին – գեղ, Սաչառ, Բաղչտաշ, Պաղչաձոր, Ռուքք, Սանաղցիք, Եսդուպցիք, Խասան,

© National Library of Armenia

Ըստպատ, Բնտրան, Կեմեկի, — յորում են էմիրը, — և Կաչոյ. բնակիչք սորա տունք իրր 100, որք իրր 80 ամօք յառաջ դարձան յազգեն հայոց ի տաճկորդիան, որոց և ազգատոհմք միանգամ ցոյժմ գնայկսկան ունին մանկանուն։ Այսպէս՝ մօտ ի Նավրեր գիւղ Հայոց, հեռի յԱկնայ 6 ժամաւ ի կողմն Լերին Սարու — Զիչէկի։ Արտաքոյ գեղջն ի գառ ի կողի լերին է գերեզման յանուն սրբոյն Գր. Նարեկացւոյ՝ պատեալ որմովք, ուր էր ասեն եկեղեցին որ կործանեցաւ. կին ոմն տաճիկ ի նոյն գեղջէ սպաս տանի գերեզմանի սրբոյն, առ որ յաճախեն ուխտաւորք յամենայն կողմանց»։

Իսկ եր. 308 նոյն հաւորին կը յիշատակէ հետեւեալ մեծ գիւղօրէս, «յորս բնակին Հայհոռոմք, այսինքն են. Վանք, Զորակ, Տէլիքլի—դաշ, Շեղոյ կամ Շեզի, Մուշեղկայ կամ Մուշեղան. այս ամենայն գիւղօրէք Հայհոռոմոց են յայնկոյս Եփրատայ։ Այդ սոցա յայտնի իմն երեւի սերեալ յազգէս Հայոց. և կրօնիւ դարձեալ ապա առ Ցոյնս, և ոչ (եթէ) սերեալ ի Ցունաց, և զլեզուն փոխեալ ի հայկականն»։ Իսկ «Թիւ նոցա (այսինքն բնակչաց քաղաքին) տունք 2,200. էջս տաճիկք և էջս Հայք»։

Ինչպէս վերոյիշեալ 17 տաճկական գիւղերն և 7 Հայհոռոմ գիւղերն յառաջագոյն հայեր էին, բայց ետքը դարձած ի տաճկութիւն և ի հայհոռմութիւն։ Այս բանս առանց երկբայութեան է, նախ համաձայն Ինճիճեանի բացորոշ վկայութեան, ապա այն ազգաբնակութեանց մէջ դեռ տեղ հայկական աւանդութիւններով։

Դիտելով որ յիշեալ գիւղերէն ոմանք մեծ էին ըստ Ինճիճեանի, այսինքն 200—300 տուն, ուստի մենք եթէ հաշուենք միջամտաբարձ իւրաքանչիւր գիւղ 100 տուն, և տուն գլուխ 10 հոգի. կ'ունենանք 17,000 տաճկացած և 7000 հայհոռոմցած հայեր Ակնայ գաւառին մէջ, ամենքն ի միասին 24,000 հայեր, և այս՝ միայն ժէ—ժէ. դարուն։

Եէջ 93, Ա. Հտ. «ԹՈՐԹՈՒՄ, գիւղաքաղաք գլխաւոր համարէն գաւառիս։ Ին ի նմա տունք իրր 400։ Պատմի գնահանի հայկազուն բնակչաց Թորթումայ թէ ձանձրացեալք ի բռնութենէ ն. ի զրկանաց, դարձան առ հաստատեալ ի կրօնս տաճկաց»։ Հոս յայտնի չէ թէ Ինճիճեանի խօսքը Թորթում աւանի՞ բնակչաց մասին է, թէ ընդհանուր գաւառին, որ ունէր 30 գիւղօրէս։ Դժուար է որ տաճկաց բռնութիւնը և զրկանքը միայն Թորթում քաղաքաւանի բնակիչները կրած ըլլան, այլ հաւանօրէն գիւղօրէք մանաւանդ, ինչպէս վերջին ժամանակաց փորձը մէկ կողմէն, միւս կողմէն ալ նոյն իսկ տաճկական գիւղերու հինաւուրց ուաւերակ եկեղեցիները, — զորոնք նախապէս կը յիշատակէ Ինճիճեան, — կը թուին վաւերացնել։ Ուստի եթէ 30 գիւղօրէից 20ը գէթ (իւրաքանչիւրն 100ական տուն հաշուելով) աւելցնենք վերոյիշեալ 400ին վրայ, կը ստացուի 2400 տուն և մէն մի տուն 10 հոգիէն = 24,000 հոգի առ նուազն թրքացած Հայեր այս գաւառիս մէջ։

Խօսելով ԿԱՄԱԽ կամ ՔԷՄԱՀ (ի հն. Դարանաղի) գաւառին վրայ, կ'ըսէ (Հտ. Ա. եր. 102). «Ճոխացեալ է այս գաւառ բնակութեամբ, հին և նոր գիւղօրէիւք, բնակեալ ի Հայոց մանաւանդ ի տաճկաց, որք ըստ մեծի մասին դարձեալ են ի Հայոց, 360 գիւղօրէք ընդ իշխանութեամբ Պէյին, յորոց 250 գիւղօրէք են հասք ամրոցին կամախու (այն է ի հնումն կոչեցեալ Ակի ամրոց։ Ասի ասին լինել գաղթականքն յազգէս Հայոց որ ի Թէքիր — Տաղ։ Իսկ բնակիչք Նորա (իմա՛ Ամրոցիս) են տունք 1500, ըստ մեծի մասին տաճիկք, և սակաւ ոմանք յազգէս Հայոց»։

Արդ՝ եթէ լաւ ի նկատի առնունք Ինճիճեանի առաջին նախադասութիւնը, թէ «ըստ մեծի մասին դարձեալ են ի Հայոց», մանաւանդ եթէ համեմատենք զանի՛ վերջին նախադասութեան հետ (նկատմամբ բնակչաց քաղաքին) թէ. «Ըստ մեծի մասին են տաճիկք». կը հետեւի որ ի հայութենէ տաճկացած հայ ազգաբնակութիւնն երբեմն մեծամասնութիւն կը կազմէր, և թէ անոնց բռնի տաճկանալով է որ ետքէն տաճիկները մեծամասնութիւն կազմած են։ Ուստի

© National Library of Armenia

այս յայտնի եղելութիւնը հիմն դնելով՝ կարելի է ըսել, որ 360 գիւղորէից մէջ գէթ 160–200 գիւղորէք գաւառին, և քաղաքէն ալ 800–1000 տունք ի հայութենէ դարձած են։ Եւ մեր բռնած ոճով հաշուելով մերձաւորապէս մէն մի գիւղ 100 տուն և տուն գլուխ 10 հոգի, կը ստանանք 160,000–200,000 թրքացեալք ի գիւղորէս, և 8,000–10,000 ի բն. քղ. որոնց գումարն իմիասին լինի = 168,000–210,000։ Եւ այս բանիս ապացոյց են անուղղակի կերպով նոյն իսկ տաճկաց հետևեալ գիւղերէն ոմանց անուանակոչութիւնքն, որոնք զուտ հայկական են. օրի. աղգաւ, Խուտի, Մարիկ կամ Մօրիկ, Կեարկ, Թան, Ճինահիզ, Էրմենիք, Լիզ, Սալամաթ, Մանգար, Գոլովի, Խնձորի, Պահուանդ, Գարվրաս, Բուռաս, Տիկկ, Վանք-տերէսի, Ճոնուր, և այլն։

ՄԱՆԱԶԿԵՐՏ կամ ՄԵԼԱԶԿԵՐՏ գաւառին համար կը գրէ (Ա. եր. 112)։ «Էին ի համօրէն գաւառին 360 գիւղորէք բնակեալք ըստ մեծի մասին ի Հայոց. բայց յամին 1762, խռովութիւնք և մարտ ի մէջ Պէյից բազում քանդմունս արարին յայս գաւառ. և հազիւ մնացին 100 գիւղորէք. յետ այնորիկ խռովութիւնք և պատերազմունք որ եղեն սակաւ ամօք յառաջ՝ ի մէջ սորա և խնուսայ պէին, մեծապէս ապականեցին զայս երկիր. և հազիւ թողին 20 գիւղորէս։ Իսկ քաղաքին համար, թէ յառաջագոյն էին ի սմա տունք 6000, այլ այժմ մնացին տունք իբր 107. յորոց 7 կամ 8 տունք են Հայոց, մնացեալքն քրիստեցաց։ Ի ժամանակս տէրութեան Հայոց էր սա քաղաք մեծ, յոյր սակս գրէ Քեսթիի Զէլէպին (ի Ճիհանենիումային). ‖ Է՛ սա բերդ հնագոյն և աթառանիստ Հայոց ‖։ Արդ՝ թէպէտև Ինճիճեան այսքան բազմաթիւ ազգաբնակութեան մը անհաւատալի կերպով բնաջնջման իբրև պատճառ յիշած չէ անոնց դարձն ի տաճկութիւն, այլ պատերազմունքն և քանդմունք. բայց անուղղակի կերպով կընանք գուշակել, որ գունդագունդ և կրկին ու կրկին գերեվարութիւնք ևս տեղի ունեցած են անշուշտ այդ ժամանակ, որով հոծ հայ ազգաբնակութիւնը գէթ մասամբ խլուած ըլլայ իր բունէն և ձուլուած թրքաց և քրդաց մէջ։ Ուստի ի նկատի ունելով 360 գիւղերը, որոնց մեծագոյն մասն այսինքն 200՝ հայեր էին, և քաղաքին բնակչաց ալ մէկ մասն, այն է 2,000–3,000 տուն։ Ուստի 220,000 հազար ըլլալու էր այնպիսեաց թիւը։

ՇՈՐԷԿԵԼ՝ Այս գաւառ լի էր բնակութեամբ և գիւղորէիւք կը գրէ (Ա. եր. 121) «Այլ յառաջ քան զ50 կամ զ60 ամ՝ Լէզկիք առ հասարակ եղծին և յաւարի առին. և ի բնակչաց բազումք կոտորեցան. և մնացեալքն գերի վարեցան. կամ փախուցեալ ցրուեցան սատ և անդ»։ Հաւանօրէն ասոնցմէ ըլլալու են նաև հայ–լազերն, որոնք Տրապիզոնի և Պարտիզակի շրջակայքը կը գտնուին այսօր, և լեզունին և հնչմունքն իսկ լազերէնով խառն է և դժուարհասկանալի։

ԱԽԼՅԽԱՅԻ նահանգը, որ 24 գաւառներէ կը բաղկանայ, և կը կազմէ Էրզրումեան փաշայութիւնը, և կը ձգուի յերկուս հին նահանգս Մեծին Հայոց, որք կը կոչուէին Գուգարք և Տայք՝ ըստ Ինճիճեանի. «Նախկին բնակիչք սորա էին յորմէ Հայկայ։ Յետ ժամանակաց տիրեցին Վիրք. բայց ի միջին դարու վերստին անկաւ ընդ իշխանութեամբ Հայոց։ Եւ ըստ Վարդանայ անունս գտանի առ Նախնիս. զի Վիրք զկողմանս Տաշրաց և զԳուգարս — ուր է Տաշիր — կոչէին յաւուրս իւր Սմբատ և զՀայս Սմբատիի. և կրսեր եղբայրն Սմբատայ Տիեզերակալին ժառանգէ զՏաշիր՝ Սկորդովք Զորոգետին, և զկայէն, և՝ զկայծան, և՝ զԽորխոռունիք, որ ի Խոռայ շինեցաւ, որ է Խոշոռնի և Խոռակերտ՝ ի գաւառն Տաշրաց և զԲաղունիք որ է Բաղկերտ. եհաս Գուրգէնայ ժառանգել» (տես Հա. Բ. եր. 276)։ Իսկ Ա. եր. 122, կը գրէ. «Բանզի ի վերջին ժամանակս կործանելոյ տէրութեան մերոյ՝ այս նահանգ եղև պատրսպարան բազմութեան իշխանաց մերոց, նաև հասարակ ժողովրդեան. որք ապա սակաւ առ սակաւ սովորեալք ի լեզու և ի

© National Library of Armenia

բարս, նաև ոմանք ի ծէս Վրաց, փոխեցան յայգր նոցա։ Այս գաւառք Մեծին Հայոց ի վաղ ժամանակաց անտի գոլով ընդ տէրութեամբ Վրաց, յայն ակս մեծ մասն այսր փաշայութեան կոչի Վրաստան, կամ ըստ տանգակց կիւրճիստան։ Գիւղօրէք այսր նահանգի, սակաւ ըստ մեծութեան նորա, յորս ըստ մեծի մասին երևին մինչև ցայժմ մենաստանք և եկեղեցիք մեծաշէնք, այլ լքեալք և քայքայեալք։ Բնակիչք նոցա ըստ մեծի մասին տանիկք, դարձեալք առ հասարակ կամ ի Հայոց և կամ ի Վրաց։ Իսկ բնակիչք քաղաքին առ հասարակ իբրև տունք 30,000, որք են տանիկք, վիրք և յազգէս Հայոց առաւել քան զՎիրս»։ Անդ. եր. 124. «Ախլցխա գաւառ և քաղաք նախ քան անցանել ընդ տէրութեամբ տանգակց, սեպհական էր ժառանգութեամբ Մէնուչէհրի որդւոյ Ղազէի, որ էր յիշխանաց անտի Վրաց։ Բայց ի թուականի Հիճրէթին 988, իբրև Մուստաֆա փաշայն հրամանաւ Սուլդան Մուրատին Գ.ի առ զՇիրվան, երևելիք ոմանք ի Վրաց յայտնի կողմանս տանգկացեալ, այս գաւառ իբրև օձախլրին նոցա պարգևեցաւ»։

Ինձ հիմեանի մեզի տուած ազգագրական և պատմական այս շահեկան տեղեկութիւններէն երեք բան ակներև են, այսինքն. Ա. թէ այդ ընդարձակ նահանգի նախկին բնակիչք ծագումով հայկազունք էին։ Բ. թէ Հայք տանգակց տիրապետութենէն թէ՛ յառաջ և թէ՛ վերջը թուով աւելի էին քան զՎիրս, ոչ միայն Ախլցխա քաղաքին, այլ և անոր պատկանեալ իմ գաւառներուն և գիւղօրէից մէջ։ Եւ իրօք Օլթիի, Շավշէթի (Սաթլէյ) և Արդուինի 50էն աւելի գիւղօրէից բնակիչները մերթ միայն տանիկք և մերթ հայ և տանիկ են ըստ Հ. Ղ. Ինճիճեանի, Վրացիք չեն յիշատակուիր։ Գ. Հետևաբար՝ ինչպէս Հիճրէթի 988 թուականէն շատ յառաջ Վրաց հետ ազգախառնուած Հայերը մեծամասնութիւն կը կազմէին, բնական էր որ այդ թուականէն անմիջապէս ետքն ալ բռնութեան ներքեւ տանգկացած հայերը շատ աւելի եղած ըլլան քան Վրացիք։ Եւ ստուգիւ այս բանիս նայելով է, որ Ինճիճեան Շիրվանայ երևելի Վրացիներու ոմանց դարձը միայն ընդհանրապէս յիշատակած է, և մասնաւորապէս ալ Վերին և Ստորին Աճարացիներունը, գրելով (Ա. եր. 131) վերջնոցս մասին. «Լի են այս գաւառք գիւղօրէք (Վրաց) բնակեալք ի տանգկաց, որք դարձեալ են ի Վրաց»։

Իսկ ԿԻՍԿԻՄ և ԲԵՐԴԱԳՐԱԿ (զոր Ինճիճեան՝ ուզած է նոյնացնել Ցայոց հին գաւառին Բերդաստփորի հետ) գաւառներուն համար կը գրէ. «Գիւղօրէք նորա կառուցեալ են առ վտակօք Ճորոխ գետոյ. բնակիչք նոցա առ հասարակ էին յազգէս Հայոց, այլ ապա ըստ մեծի մասին դարձան ի տանգկորիան, և սակաւ Ճացին ի քրիստոնէից. և թէ Բերդագրակն՝ գիւղաքաղաք համօրէն գաւառին, և բնակիչք նորա (արդ) տանիկք, սակայն կան ի նմա տակաւին եկեղեցիք»։ Բերդագրակ գաւառին մէջ միայն կը յիշատակէ (եր. 133) 15 գիւղօրէս Հայոց, ի թիւս որոց և Ղղտուան մեծ գիւղը, որուն համար կըսէ. «Որոյ բնակիչք նորոգ տանգկացան»։

ԱՐԴՈՒԻՆ գաւառին համար կը գրէ (եր. 130). «Ունի գիւղօրէս 50, որոց մեծագոյն մասն են տանիկք» (այսինքն՝ տանգկացած Հայեր), սակայն առանց յանուանէ յիշատակելու զանոնք։ Նոյնչափ գիւղօրէս ալ տանգկաց յանուանէ կը յիշատակէ Ախլցխայի գաւառին մէջ, յորս նշանակելի է՝ «Սարբաս կամ Սոսֆառս՝ կիսով ժամաւ հեռի յԱխլցխա քաղաքէն. առ սովաւ տեսանի մեծակառոյց զմբեթաւոր քարաշէն եկեղեցի, որ թուի լինել գործ թագաւորաշէն. յոր յանախեն ուխտաւորք յազգէս Հայոց և ի Վրաց, և Նաոխման, որ ի բնակչաց աւանդի լինել այլայլեալ ի նախնի անուանէս Մամրոտան կամ լաւ ևս Մամերման, յիշատակեալ ի Վարդանայ յաւուրս Կուրապաղատին Դաւթի. յորում են այժմ տունք իբր 100 առ հասարակ տանիկք», այսինքն տանգկացած Հայեր, որուն յայտնի նշան է սրբատեղին և հինաւուրց մատուռն, «ուր ամի ամի, ի տօնի Վարդավառին խուռն ընթանան ուխտաւորք»։

© National Library of Armenia

Աբդ՝ եթէ ի նկատի առնունք ընդարձակածաւալ Նահանգիս (այսինքն Գուգարաց և Ցայոց հարիւրաւոր գիւղերէն միայն 65–70ը գէթ, որոնց մէջ, — Ցաճկաց յիշեալ տիրապետութենէն առաջ Հայերը մեծամասնութիւն կը կազմէին, — հաշուենք անոնցմէ իւրաքանչիւրը մերձաւորապէս 100 տուն, (չնայելով որ մի քանի քաղաքաւաններում կային 600–2000 բնակիչք), և տուն գլուխ 10 հոգի, պիտի ունենանք տոնուազն 65,000 – 70,000 վրացած և մահմէտականացած Հայեր։

ՌՈՒՄԳԱԼԷ (ի հն. Հռոմկլայ) Նահանգի նկարագրին մէջ (Բ. եր. 341–343) կը գրէ. «Լնհէշ, գիւղ առ Ռումգալէին՝ յարևմտից Եփրատայ, և Ճիպին՝ գեղ յարևելից Եփրատայ, մերձ Ռումգալէ. բնակիչք սոցա առ հասարակ յազգէս Հայոց, որք ունին եկեղեցիս քարակերտս և մեծաշէնս յոլովաքար վիմաց, և առ նմին զանգակատունս նոյնպէս քարաշէնս։ Իսկ Ա. ռան, Հայնի, Բէ.իլիք՝ են երեք գիւղօրէք մերձ միմիանց և Ռումգալէին՝ յարևելից Եփրատայ. բնակիչք երից գիւղօրէիցս ևս են կենկեաք, որք առ բռնութեան դարձեալ գոլով յազգէս Հայոց ի տանկութիւն՝ ի մէջ ԺԲ. դարուն, որպէս ասեն, ակնմայ միայն պահեն գծէսս նոցա, և յօժարակամ գծէսս քրիստոնէից։ Զգենուն ըստ տանկաց, բայց հասարակ լեզու նոցա է հայկական, և այն յատակ ըստ հնչման, և խառն ընդ գրաբարի։ Աբքն՝ որք շրջին ասա և անդ, գիտեն իսօսել ի բարբառ տանկաց, բայց կանայք նոցա քանզի միշտ ատանին են՝ գրեթէ առ հասարակ բաց ի հայկականեն ոչ գիտեն ոմն ինչ բարբառ, և այն մաքուր և յատակ ըստ հնչման և ըստ բառից՝ որ մերձենայ ի գրաբառն։ Բնաւ խորշին բնակել ի քաղաքս տանկաց, զի մի՛ բռնադատեսցին ի պանդուխտութիւն օրինաց նոցա։ Զուրխս իրենց մկրտել տան, և դնեն անուանս կամ աններշանս և կամ հին նահապետաց և մարգարէից, և ո՛չ դնեն անուանս տանկ տանձիականս, բայց ի լինել մանկան ուժամեայ կամ իննամեայ՝ թլփատել տան։

Ի յամուսնանալ իւրեանց՝ գիշերայն գնացեալ յեկեղեցիսն կատարել տան քահանային զամենայն օրինութիւնս խորհրդոյ պրտակին, բայց ապա գնացեալ ի յԻրքա ամուսնանան և՝ ըստ տանկական օրինի։ Պահեն խստութեամբ զամենայն պահս ծիսի Հայոց՝ զՇաբաթականս, և մանաւանդ զԲատասնորդականն, և զՊաստաւորացն, յորում բազումք զառուրս երիս ամենեին անուսաղ անցուցանեն, թէպետ և առ անուտութեան անկանիլ դիպեսցի նոցա ի մահիճս։ Իսկ զպահս տանկաց ո՛չ պահեն, եթէ ոչ՝ յորժամ գտանին ի քաղաքս բնակեալս ի տանկաց։

Յառուրս կիրակէից գնան յեկեղեցիս մերձակայ գիւղօրէից Հայոց, զոր օրինակ յԼնհէշ, ի Ճիպին, էն. տեսանեն զպատարագ, խաչակնքեն զդէմս, առնեն ծերպրութիւնս, մատուցանեն զորդիս իրենց առ ի ընթերնուոյ ի վերայ զատեստարան։ Իսկ ի յառաջ հինգշաբաթի գիշերայն մատուցանել տան պատարագ առանձին վասն իրենց, և խոստովանեալ հաղորդին օրինաց. իսկ ի մզկիթս ոչ գնան, բայց եթէ յորժամ գտանին յԻրքա կամ յայլ քաղաքս տանկաց։ Բազում յարգութեամբ ընդունին միառն ի նուիրակեն կաթողիկոսին Սոոյ, և իրաքանչիւր գիւղօրէք տան ողորմութիւն 50 դրշ։ Բայց եթէ երբեմն մօրայ ոք եկեսցէ առ նոսա ի մերձակայ տեղեաց, պէտք ունի պարտիզ փուրով հնարին հանել գնա անտի։ Ի հիւանդանալ իրենց՝ գիշերայն բերեալ քահանայ խոստովանին և հաղորդին, բայց ի մեռանելն կոչեալ զիմամն ի քաղաքէն, նմա տան թաղել իբր տանիկ. յետ թաղելոյ տարեալ քահանայ ի վերայ գերեզմանի մեռելոյն, կատարել տան զամենայն կարգս քրիստոնէից. և ըստ կիսոյն տանկաց նմանելով, երբեմն այսպէս ձեռանալով և երբեմն այնպէս՝ երկոցունց ևս հաղորդին, այլ յերկոցունց ևս պակասին, և ըստ արժանւոյն կոչին յամենեցունց կենկեաք, և աղաւաղանօք կասկաս։ Այս հայկական անուն է զոր ծեթքելով յիտալական բարբառ՝ կոչեցին Աստաք կամ ըստ նոցա Աստասին. քանզի և այս անուն ի ԺԱ. և ԺԲ. դարուն ի ժամանակս խաչակրաց մուծաւ յիտալացւոց բարբառ, որով կոչէին ժողովուրդ ինչ

© National Library of Armenia

զկողմամբք Կիլիկիոյ, որք ըստ կիսոյն քրիստոնեայ էին և ըստ կիսոյն յոտար դեն խառնեալ։ Եւ քանզի սոքա աւազակութեանց պարապէին, յայնմանէ սովորութիւն եղև առ խաղացիս զամենայն աւազակս կոչել Ասասինի. վասն որոյ վայրապար տառապեցան ոմանք, ընդ որս և երևելին Մուրատրիոս վասն ստուգաբանութեան այսր ասասինի անուան, յԱրչակունի անուանէ կարծել ածանցեալ, և ոմանց յայլ անուանէ։ Բաց ի յերեցունց գիւղօրէիցս գտանին ի սոցանէ, և յայլ տեղիս[1]. ոչ տան հարկս, այսինքն խարաճ, այլ միայն տուրս վասն կալուածոց իւրեանց, զի դէնիւ տաճիկ համարեալ են առ ամենեսին։ Բարուք հիւրասէր են. բազում մեծարանս առնելով մանաւանդ Հայոց»։ Այս գիւղօրէքս, իւրաքանչիւրն հաշուելով 100 տուն, և տուն գլուխ 10 հոգի կը ստացուին ոգիք իբրև 3,000. իսկ Անթապի կէսկէսներն ևս առ նուազն նոյնչափ, եթէ ոչ աւելի առնելով, կ'ուենենանք 6,000–7,000 ոգիս։

ՄԱՐԱՆԴ (ի հն. Հեր և Զարևանդ) գաւառին համար կը գրէ (Բ. եր. 252) «Բնակիչք սորա ի ժամանակին Շարդէնի (1671–1675) էին տունք 2500 իսկ այժմ են իբր 200, ի Հայոց սակաւք. իսկ Քեաթիպ Զէլէպի կը դնէր ի գաւառի աստ գիւղօրէս 100, այժմ (իմա՝ 1806ին) կ'ըսէ Ինճիճեան. «Գտանին 15 գիւղք՝ բնակեալք ի Պարսից»։ Ուրեմն մնացեալ 85 գիւղօրէից բնակիչքը կամ գերի տարուած, և կամ հետ գհետէ բռնութեան ներքև մահմետականացած են հաւանօրէն, այսինքն՝ մօտ 85,000 հոգի։

Ըստ Ինճիճեանի՝ ԻՍԵԼԱՆ կամ ԻՍՓԵԼԱՆ լեռնազաւառին (ի Նահանգին Ցիարպէքիրի). «Կան զանազան գիւղօրէք, որոնց բնակիչքն առ հասարակ Հայք էին, բայց այժմ սակաւք ոմանք իսօսին հայերէն իսկ հասարակ լեզու նոցա է քրդերէն։ Գրեթէ անուամբ միայն ունին զբրիստոնեութիւն.

1. Բ. Հ. եր. 377. Խօսելով համաձուակի Աչեթաոյի վրայ, կ'ըսէ այսպէս. «Բնակիչք սորա տաճիկք, Հայք և Կիւակաք». բայց դժբախտօրէն չի նշանակեր թէ ո՞րքան էր վերջինս թէ և թէ դեռ ուրիշ ի՞նչ տեսակ կը գտնուէին։

յոտնին անդ եկեղեցի և ոչ քահանայ. բաղումք ի նոցանէ և ոչ իսկ գիտեն խաչակնքելոյ։ Միանգամ ի տարուոջ, ի տօնի Ս. Խաչին, բազմութեամբ գնան յոտիս ի Հազրու եկեղեցին, Այն — ի դրիցի. և անդ մնացեալ զաւուրս երիս կամ չորս՝ տան պատարագ առնեն, և զուրախութիւն իւրեանց կատարեալ՝ անդադար հրազէնս արձակելով, գնան ա՝գա ի Ս. Աստաքերց վանունն. և այս է բովանդակ տարեկան պաշտամունք նոցա։ Որոշին Հայք ի տաճիկաց ապիտակ պաստառ պատելով ի գլուխս իւրեանց»։

Ցոյժ հետաքրքրական է Խաքեանի լեռնաբնակ հայերու գիմման և պատերազմելու նկարագիրը զոր կու տայ Ինճիճեան (Բ. Հտ. 244–245 էջերուն մէջ). բայց որովհետև այդ հատորն սպառած բլլալով՝ շատերուն անմատչելի է, ուստի կարևոր կը համարիմ արտագրել հոս նոյնութեամբ՝ մերայոց օգտին համար ապագային. «Ունի այս գաւառ երկուս մեծամեծ լերինս տարակացս ի միմեանց իբրև միով օթևանաւ. ի մէջ նոցա այլ խոնարհ լերինս, որք են գոտի կցեալ ընդ լերանց Հազրոյ։ Այս երկու լերինք որք տիրապէս կոչին Իսեան կամ Իսքեան, են դրունք գաւառին, և տեղի ապաստանի ապստամբութեան նոցա. զի մի միայն է անցք ելից նոցա։ Ի վերայ երկուց լերանցս ևս է մի մի աւան անպարիսպ. ի միումն բնակեն տաճիկք և քուրդք, իսկ ի միւսումն՝ որ է մեծ և բարձր քան զկեառն տաճկաց՝ բնակին Հայք. ի վերայ երկուց լերանց ևս բդիսէ չորս պատուական. երկիր նոցա բերէ ցորեան և այլ բազում արմտիս։ Տաճիկք են հեծելազօրք և տիգաւորք, որք զորդիս իւրեանց յառաջին տիոց անտի կրթեն յայս արուեստս. իսկ Հայք առ հասարակ հեստակք և ամբաձիգք, այսինքն թիւթենկիրք, ձարտարք յոյժ ի ձգել զտումբս ի նպատակս. զի զորդիս իւրեանց ի հասանել ի չափ հնգից ամաց՝ վարժեն յայս արուեստս. և զի հանապազօր պարապին յայս գործ՝ ոմանք յուսուցանել մանկանց, և ոմանք ի չկորուսանել զուսեալ վարժութիւնն, յայն սակս զօրն ողջոյն լսելի լինին ի վերայ

լերին ձայնք հրազինաց։ Այս է գրեթէ արուեստ նոցա և դարման, զի առաւել աւազակութեամբ պարապին քան թէ աշուեստիւ. յորս սակաւ են յոյժ արուեստաւորք, այսինքն երկրագործք, կտաւագործք, ևն. և այն՝ կանայք նոցա, և ի պէտս իւրեանց միայն։ Մարմնով են յաղթանդամք, բարձրահասակք և զօրաւորք յոյժ. ի գիտս պատերազմի հնարագործք և ձարտարք. շրջին միշտ սպառազինեալք նաև մանկունք նոցա. ի շրջին ի գիշերի ի լոյս լուսնի, ի յաւազակել զանցաւորս, յորից մինչև ի գլուխ զգեստն սպիտակ, մինչև ճանապարհորդաց երևիլ հատոր ինչ սպիտակ վիմի։

Ի լինել պատերազմի՝ զամենայն գաղթ և զկարասիս տանց գիւղորէից իւրեանց թաղեն ի գետնափոր գաղտնի գուբս, զոր չէ մարթ իմանալ։ Իսկ բնակիչքն ամրասնան կամ ի լեառն Հայոց և կամ ի լեառն Քրդաց, որպէս և դէպ լիցի ըստ յարձկման թշնամւոյն. և գաւառ լերին պատեն առ հասարակ հոդաշէն պատնէշաւ. և գնոյն պատեն արտաքոյ 7, 8, մինչև 12 թաղեալ խորգովք, առ կախեալ մի գկնի միոյ, ընդ որ ի հնասանել ամրաց՝ ընկղմեալ ի ներս՝ ոչինչ վնաս գործեն. զկանայս և զմանկունս իւրեանց դնեն յայնմ ամրափակ ատանին. իսկ ինքեանք հետեւակք և հեծելազօրք ելանեն ի վայր՝ պահպանել զանցս լերին. փոփոխակի և կարգաւ պատերազմին. երբ տիգաւոր հեծելազօրն խորտակի, յառաջի անցանեն ամրաձիգ հետեւակք. իսկ ի տկարանալն սոցա՝ յարձակին տիգաւորք։ Ի պատերազմելն՝ կանայք և մանկունք նոցա յաւանին ձայն արձակեալ ուրախութեան՝ երգեն զերգս ընդդէմ թշնամեաց։ Այնչափ է սոցա սիրելի պատերազմ, զի զլուր գալստեան թշնամեաց աւետիս համարին անձանց։ Ուստի չեղև երբէք հնար նուաճելոյ կամ բառնալոյ զնոսա, ի դիւրութիւն և յապահովութիւն անցաւորաց։ Ցամին 1782 փաշայն Տիարպէքիրոյ հանդերձ այլ ևս երկու փաշայիք յարեաւ ի վերայ սորա 4500 զօրօք, և գաւուրս 8 պատերազմ տուեալ և ոչինչ կարացեալ՝ դարձաւ յետս, կոտրեալ ի զօրաց իւրոց իբրև 500, զոր կոտորեցին իսքեանք և յաւարի առին զամենայն։ Ի 1785 դարձեալ զօրս առաքեաց ի վերայ սոցա, որոց սակաւ գոլով թուով քան զառաջինն՝ ոչ իշխեցին և ոչ իսկ յարձակել ի վերայ. բայց ի 1798 սպանին զիսքեան աղա՝ զտէր երկրին. որում ապա յաջորդեաց որդի նորա։ Երկիրս այս իսքեան աղային՝ կոչի Պանօքցոց երկիր, յորում են Հայրոցիձ, Քասբէ, որ է աւան մեծ բնակեալ ի Քրդաց և ի Հայոց, որք գործեն սուսերս. և այս երկիր Պանօքցոց՝ է բեմ Ս. Յոհանեան որ ի Մուշ» են։

Դժուար է որ այսպիսի պարագայից մէջ կարենային դոքա պահել իրենց հայութիւնը, առանց քրդաց հետ ազգախառնուելու. իսկ եթէ պահած են երբէք, դժուար է որ Եւրոպացիք՝ Թիւրտեաց հետ չշփոթեն զանոնք։ Ուշ դնելու են այս բանիս նաև մերազնեայ քննիչքն, որպէս զի Հայոց մէջ դասեն զիրենք։

ԲԱՂԻՇ կամ ԲԻԹԼԻՍ գաւառին վրայ խօսելով (Ա. եր. 167–180) կը գրէ. «Այս ընդարձակ գաւառ որ ի հնումն կոչէր Սասնոյ-ՀՈՐ, յարևելից սահմանակից է Խլաթայ և Դատուանայ, յարևմտից Մշոյ, ի հիւսիսոյ՝ Մալազկերտի, պատեալ է դժուարամատոյց լերամբք։ Բնակիչքն են ըստ մեծի մասին զանազան ցեղք քրդաց, յորոց ցեղ ինչ կոչի Ալոտանի. բայց յայն գիւղօրէս ուր գտանին յազգէս Հայոց, խօսին (այսինքն քուրդք) առ հասարակ նաև հայերէն. և ոչ են վրանաբնակք և թափառականք, այլ ունին հաստատ բնակութիւն։ Ցառաչացոյն բազմութիւն կային Հայոց յայս գաւառ. այլ սակս պէսպէս հարստահարութեանց ցրուեալ՝ այժմ սակաւ մնացին. լեզու նոցա ծանր է և տարբեր յոյժ յայլ գաւառական լեզուաց Հայոց։ Իսկ բնակիչքն Բաղիշոյ (քրդ.) յառաջ ժամանակաւ էին տունք իբրև 25,000, այլ յանդգնար խռովութեանց և ի սաստիկ սովէ ինչ, որ եղև իբրև 60 կամ 70 ամօք յառաջ, բազմութիւն քաղաքացեաց ցրուեալ աստ և անդ, այժմ մնացին տունք իբրև 5,000, յորոց իբր 1,500, տունք են յազգէս Հայոց»։

(Շարունակելի) Հ. Բ. ՍԱՐԳԻՍԵԱՆ

© National Library of Armenia